ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1) Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անահիտ Մշեցյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի ավագ մասնագետ.

2) Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2024 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ:

3) Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ:

4) Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպվող «Հարկման համակարգի հեռանկարները/Future of Taxation (FOT)» թեմայով դասընթացին և զարգացնել մասնագիտական գիտելիքները:

5) Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Հարկային արձագանքը վերջին մի շարք տնտեսական ցնցումների դեպքում, հարկային բարեփոխումների շարժիչ ուժերը և գործընթացը:

2) Հարկային համակարգերը JVI տարածաշրջանում.

- եկամուտների մոբիլիզացումը որպես հիմնական խնդիր,
- հարկային համակարգերի նպատակները,
- միջազգային և տարածաշրջանային միտումներ, մարտահրավերներ:

3) Ավստրիական հարկային համակարգի շրջանակում ներկայացվել են Ավստրիայի հարկային համակարգի կառուցվածքը և վերջին հարկային բարեփոխումները:

4) Հարկում և ներառական աճ թեմայի շրջանակում ներկայացվել են հարկաբյուջետային քաղաքականության գործառույթները, եկամուտների բաշխման և տարբեր տեսակի հարկերի դերը:

5) Եկամուտների համակարգի և հարկային բարեփոխումների հիմնասյուները թեմայի շրջանակում քննարկվել է, մասնավորապես, միջնաժամկետ եկամուտների ռազմավարությունը (MTRS)՝ որպես արդյունավետ հարկային համակարգի բարեփոխման մոտեցում:

Միաժամանակ, ներկայացվել են նաև հարկային վարչարարությանն առնչվող թեմաներ, մասնավորապես՝

- ժամանակակից հարկային վարչարարության սկզբունքները, տարրերը,
- տրանսֆերային գնագոյացման կարևորությունը և տարբեր մոտեցումներ,
- թվայնացումը հարկային վարչարարության մեջ:

Անդրադարձ է կատարվել նաև ածխածնի գնագոյացման և հարկման համակարգերին, որի նպատակն է լուծել կլիմայի արտաքին ազդեցությունը:

6) Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ելույթներ և առանձին հանդիպումներ տեղի չեն ունեցել:

Բոլոր դասախոսությունները իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ: Կազմակերպվել են խմբային աշխատանքներ:

7) Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8) Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ներկայացված նյութերը և քննարկված թեմաները համապատաս-

խանում էին ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության առջև դրված խնդիրներին, դրանք կիրառելի են վարչության կողմից հարկային վարչարարության մեթոդաբանության մշակման ժամանակ:

9) Ստորագրությունը, ամսաթիվը:

Եկամուտների քաղաքականության
և հարկային վարչարարության
մեթոդաբանության բաժնի ավագ
մասնագետ

Անահիտ Մշեցյան

17 սեպտեմբերի 2024թ.